ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 4-6-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Կանոնադրության հանձնախմբի հերթական նիստը՝ հանձնախմբի նախագահ, ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանի նախագահությամբ:

Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հունվար ամսից հանձնախումբը գործում է նոր կազմով, որի մեջ ընդգրկված են Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը, Երուսաղեմի Հայոց պատրիարքությունից՝ Սևան եպս. Ղարիբյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Անգլիայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Տ. Մամբրե քհն. Գուզույանը՝ ԱՄՆ Արևելյան թեմից, Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից՝ տիար Սեդրակ Տավուտխանը, ՀՀ Արդարադատության համակարգից՝ Տարիել Բարսեղյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Ռաֆայել Պապայանը և Ազատ Բոզոյանը:

Եռօրյա նիստերի ընթացքում Կանոնադրության նոր հանձնախումբը, շարունակելով նախորդ հանձնախմբի աշխատանքը, ամբողջությամբ վերանայեց կանոնադրության նախագիծը՝ թեմերից ստացված առաջարկությունների հիման վրա կատարելով անհրաժեշտ փոփոխություններ: Առաջիկայում մշակված նախագիծը կներկայացվի Ամենայն Հայոց Հայրապետի ուշադրությանը, ապա կքննարկվի Գերագույն Հոգևոր Խորհրդում:

Կանոնադրությունը վերջնականորեն կհաստատվի Ազգային եկեղեցական ժողովի կողմից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ